բարձրութեան ամենախոնարհ ծառայ և աղօթարար

Դանիէլ կաթողիկոս ամենայն հայոց

Ցամի Տեառն 1808
Ցամսեանն յուլիսի... աւուրն
ՅԱԹՈՌՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Ի ՍՈՒԲԲ ԷՋՄԻԱԾԻՆ,
ՈՐ ՅԱՐԱՐԱՏ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴ. ԳՐՈՒԹԻՒՆԸ ՆԱՊՕԼԻՈՆ ՄԵԾԻՆ

Մեծ Նապոլիոն խաչասպակ ինքնակալ կայսր սիրող բարեպաշտութեան

Ամենողորմած թագաւոր և պաշտպան հաւատացելոց

Շնորհք և ողորմութիւն և բարերար ակնարկութիւն կայսերաց գաղիացւոց ի ժամանակս յառաջինս եղեալս է առ թագաւորս առ Քահանայապետս և առ բոլոր ազգն հայոց յոյժ առատութեամբ զորոյ լաւ ևս քան զմեզ կարող էք գիտել ի նախնեաց պատմութեանց։

Բայց յօրէ վերջանալոյ թագաւորական ճոխութեան հայոց մինչև ցայսօր ժամանակի, թէպէտ ջերմեռանդութիւն սիրոյ Քահանայապետաց և Ազգի Հայոց կայ մնայ նոյնպէս հաստատուն կերպիւ, այլ պսակ ջերմեռանդութեան նոցին նշան քաղցր ակնարկութեանց տիեզերակալաց Գաղղիացւոց, նաև գիր ողորմութեան անգամ բոլորապէս վերջացեալ. կարօտ եմք ազգովին և համարիմք մեզ այն անբաղդութիւն ի վերայ անբաղդութեանց։

Առիթ ցնծութեան եղև բազմավիշտ հոգևորականացս և Արարատեան Աթոռոյն Էջմիածնի մինչ յամն 1804, լուր եհաս յականջս մեր, թէ գիր ողորմութեան Ձերոյ կայսերական բարերութեան ունիմք ստանալ. այլ

և այն մնացաք կարօտեալք. քանզի բդեշխն Պայազիտոյ սպան զՑովսէփ անուն գրաբերն յազգէ մերմէ և ի կորուստ գնացին ամենայն գրութիւնք որք ընդ նմա։

Բարեբաղդութեան սկիզբն համարեցաք մեզ յորժամ յամի 1808 յունիս 16 գտաւ ի սուրբ Աթոռս Արարատեան հաւատարիմ ծառայ Ձերոյ Կ. Մ. Արեգական նշանակիր Ժոմպաթիստ Բուասսօն ըստ որում յաւիտենից փառացն արժանաւոր քահանայապետ կաթուղիկոսն ամենայն հայոց Դանիէլ՝ ամենախոնարհաբար գրով մատոյց զջերմեռանդութիւն իւր առաջի ամենողորմած Աթոռոյ Ձերում Կ. Բարձրութեան այլ մինչև ցայսօր տակաւին չունիմք զծանօթութիւն և ոչ վասն այնորիկ։

Ուրախութիւն մեծ նոր կրկին ընծայեցաւ տառապեալ հոգևորականացս բազմութեան մինչ ի նմին ժամփնակի և թերևս նշան առ մեզ յատուկ ողորմութեանն Աստուծոյ որպէս պատկեր Աստուածանման ողորմած սուրբ կայսերութեան Ձեր եկն ի քահանայապետական Աթոռս Արարատեան վասն այցելութեան անայցելու հոգևորականաց բազմութեան սուրբ Տաճարին Աստուծոյ բարձրագոյն փառօք և պատուօք վերահռչակեալ ճեննարալ Գարտան Էտղրգան դեսպան տիեզերական տէրութեան Ձերոյ առ Շահն Պարսից։ Մեք թէպէտ եմք այժմիկ առաւելապէս ևս տարակուսեալք ըստ որում յիշեալ քահանայապետն մեր ևս թողեալ վասն Ձեր զիւր բազմապատիկ օրհնութիւնն հանդերձ ինքն առ բաղձալին իւր Քրիստոս, և փոխանորդն նորա յատկացուցեալն վասն քահանայապետութեան ամենայն Հայոց Եփրեմ Արք եպիսկոպոսն Ռուսաստանու հայոց դեռ ևս ոչ ժամանեաց յԱթոռ իւր, այլ այսու ամենայնիւ մեք համագումարեալ հոգևորականք Հայոց Արք եպիսկոպոսք, եպիսկոպոսք, վարդապետք և կղերք բո-

լորեալ ջերմեռանդութեամբ աղօթարարք վասն ամենողորմած Աթոռոյ սուրբ Կ. Ներոյ ամենախոնարհաբար երկրպագութիւն մատուցանելով Ներում Կ. Բարձրութեան պէս փոխանորդի երկնաւոր թագաւորին մերում Աստուծոյ, յանձն առնեմք շնորհաց տշխարհատարած ողորմութեան Ներում զմեզ և զԱթոռս Արարատեան սուրբ Էջմիածին և զամենայն հոգևորականս և զմարմնաւորականս ամենայն ազգի Հայոց և ամենախոնարհաբար խընդրեմք զի վերստին նորոգ և զնոյն շնորհ նախնի թագաւորաց Ներոց Աթոռակալաց շնորհ ունիցիք յատկապէս ի վերայ քահանայապետական Աթոռոյս ամենայն Հայոց սուրբ Էջմիածնի, որ յԱրարատ, այլև աղաչեմք և պաղատիմք, զի ուրև տարածես ի ողորմութեան Աթոռոյ Ներոյ կայսերական Մեծութեան եղիցի հովանի ազգի և եկեղեցւոյ Հայաստանեայց։

Ցայլ որպիսութիւնս լաւ ևս կարէ պատմել բերանով լիշեալ գերապատիւ դեսպանն մեծ տէրութեան Ներոյ, որ եղև ականատես և հասու բաւականապէս։

Ողջ լեր ամենաողորմած օգոստոս սուրբ կայսր և մեք յուսով մեծաւ մնամք ողջոյն աղգաւ աղօթարար վասն անգին կենաց Ներոց և բոլոր պալատի Ներում։

Օգոստոս ինքնակալ Ներոյ բարձրագոյն և ամենաողորմած կայսրութեան

Խոնարհ ծառայք և աղօթարարք Արք-եպիսկոպոսունք սուրբ Ժողովոյն բարձրագոյն խորհրդարանի սրբոյ Էջմիածնի։

Բարսեղ արք-եպիսկոպոս
Յովսեփ արք-եպիսկոպոս
Միսաել արք-եպիսկոպոս
Աղոնիաս արք-եպիսկոպոս
Այրեքսան արք-եպիսկոպոս
Յովհաննես արք-եպիսկոպոս
Ներսես արք-եպիսկոպոս

Ի 1809 ապրիլի 25
Ի Սուրբ Էջմիածին

Հայցեմ։ Նորին կայսերական մեծութեան ինքնակալի Ֆրանցայու և գրայի Իտալիոյ Օգոստափառ մեծ Նապոլիոն ամենաողորմած թագաւորի մերում։